

**ԱՐՅԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ**

Լեոնային Ղարաբաղում գիտության և կրթության օջախների ստեղծման ու կայացման ամբողջական համակարգում իր առանձնահատուկ տեղն ունի Արցախի պետական համալսարանը: Այն ստեղծվել և կայացել է 20-րդ դարի երկրորդ կեսին Լեոնային Ղարաբաղում հայկական գործոնի պահպանման ու զարգացման հետ միասին: Արցախի համալսարանն իր սկզբնավորման ու ձևավորման առաջին ժամանակահատվածն ապրել է հակասական կյանքով: Այս երևույթը պայմանավորվել է առավելապես սուբյեկտիվ պատճառներով. համալսարանի կայացմանը նախնական շրջանում լուրջ խոչընդոտ է հանդիսացել նրա ինքնուրույն գործունեության համար փակուղիների ստեղծումը խորհրդային իշխանական համակարգի կողմից: Գիտակրթական այս օջախը մշտապես գտնվել է ԼՂԻՄ կուսակցական ու պետական մարմինների վարչական հսկողության տակ: 1969-88թթ. պետական անվտանգության կոմիտեի մարզային բաժանմունքի աշխատողին գրեթե ամեն օր կարելի էր տեսնել համալսարանում: Խորհրդային իրավակարգի պայմաններում համալսարանը դիտվում էր իբրև անվստահելի կառույց: Պետական անվտանգության ծառայության պատասխանատու աշխատողները միանշանակ այն կարծիքին էին, որ հայկական ազգայնական գաղափարախոսությունն ամենայն հեշտությամբ կարող է թափանցել համալսարան: Հատկապես վտանգավոր էր համարվում դաշնակցական անջատողականության տեսությունը: Չնայած այս խոչընդոտներին, ի հակակշիռ գործող քաղաքական գծի, համալսարանն այդ տարիներին դարձել էր գիտակրթական կայուն օջախ, որտեղ միավորվում էին երիտասարդ սերնդի առաջատար ուժերը մարզի բոլոր ծայրերից և հարևան հայաբնակ շրջաններից: Համալսարանում այդ ուժերը կայացել էին հատկապես ազգային ինքնագիտակցության ընկալումով և գիտելիքների պաշարով վերադարձել, գրավել աշխատատեղեր ու դիրքեր՝ կյանքի տարբեր ասպարեզներում: Իրավացիորեն կարելի է ասել, որ բոլոր դեպքերում էլ համալսարանի գերինդիքը եղել է ազգային արժեքների պահպանումը և ազգային ինքնագիտակցության սերմանումը:

Վերոշարադրյալը հաստատում է այն անհերքելի փաստը, որ 80-ական թվականների երկրորդ կեսերին ազատագրական պայքարի նոր փուլի սկզբնավորման առաջին օրերից սկսած՝ համալսարանը հանդես է եկել որպես արցախահայության միավորման ու պայքարի գիտական հիմնավորման օջախ: Իսկ ազատամարտի առաջին օրերից սկսած՝ սկզբնավորվել է ուսանողների ու դասախոսների կամավոր զինվորագրումը հանուն սուրբ նպատակի՝ ղարաբաղյան հողում հայության պաշտպանության ու հարատևման:

**ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴՆ ՈՒ  
ԿԱՅԱՑՈՒՄԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ  
(1969-1988թթ.)**

Վաղնջական ժամանակներից սկսած հայ մարդը մշտապես գիտելիքը գերադասել է նյութից: Հայը գիտելիքն ու կրթությունն ավելի շուտ համադրել է ջրի հետ՝ որպես կյանքի գործոնի, որպես հողը սնուցող մոր: Ջրի պես է նաև գիտելիքը: Հենց այս տեսանկյունից էլ մեր ժողովուրդը Մեծն Մաշտոցին դասել է սրբերի շարքը: Առաջին դպրոցների հիմնումը կապված է Մեսրոպ Մաշտոցի անվան հետ: Պատմաբանները հաստատում են, որ Մաշտոցը դպրոց է հիմնել նաև Արցախի տարածքում՝ Ամարասում: Այդ փաստը վկայում է, որ Մաշտոցի ապրած ժամանակներից առայսօր Արցախում գիտության ու կրթության օջախները միշտ անբաժան են եղել մայր Հայաստանում հիմնադրված հաստատություններից: Անկասկած, վրիպում են այն տեսաբանները, ովքեր Լեոնային Ղարաբաղը ՀՀ-ից առանձնացնում են կրթության, գիտության և հայկական ավելի լայնիմաստ մշակույթի ձևավորման ու զարգացման տեսակետից:

Լեոնային Ղարաբաղը պատմական Հայաստանի անբաժանելի մասն է: Հետևաբար, հայկական լեոնաշխարհի գիտության ու մշակույթի նվաճումները միննույն ժամանակ պատկանում են Ղարաբաղին: Նույն առումով Արցախի տարածքում կառուցված կոթողների, կրթության ու մշակույթի կենտրոնները ողջ հայության սեփականությունն է: Էթնոսը, իբրև մարդկանց սոցիալական խումբ, սահմաններ չի ճանաչում: Այն գոյություն ունի սոսկ միասնական հոգեբանությամբ, գիտակցությամբ ու արժեքների գնահատմամբ: Տեսական-հասարակագիտական այս ըմբռնումով էլ կարելի է պնդել, որ Վաղարշապատը, Անին, Գլաձորի և Տաթևի համլասարանները, Վենետիկի Մխիթար Մեբաստացու ստեղծած հայագիտական կենտրոնը, Լազարյան ճեմարանն ու Ներսիսյան դպրոցը, Շուշիի թեմականն ու ռեալականը, Գևորգյան ճեմարանի, Նոր Նախիջևանի, Նոր Ջուղայի, Պետերբուրգի հայկական կրթօջախները ժամանակին դրսևորվել են ինչպես կրթական հիմնարկներ, այնպես էլ՝ ազգային-հասարակական կյանքի և գիտամշակութային առաջադիմության խոշորագույն օջախներ: Նրանց ստեղծումն ու կայացումը հիմնարար նախապայմաններ են հանդիսացել հայկական բարձրագույն դպրոցի ստեղծման համար: Իրար հաջորդող քաղաքական անբարենպաստ պայմաններում այդ ուսումնագիտական հաստատությունները հսկայական դեր են ունեցել ոչ միայն հայոց մշակութային գանձերը ոչնչացումից փրկելու, ուսուցիչների, բժիշկների, թարգմանիչների, նկարիչների, շինարարների պատրաստման ասպարեզում, այլև հայ ժողովրդին ուժացման վտանգից փրկելու գործում: Պետականություն չունեցող Հայաստանն ստիպված էր սահմանափակվել վերը նշվածով:

Կայսրությունները, որոնց տիրապետության տակ էր գտնվում Հայաստանը, չէին կարող տալ իրենց համաձայնությունը դասական համալսարան բացելու, քանի որ նման կրթական օջախում տեղի կունենար ազգային մտավորականության համախմբում, ինչը կուղեկցվեր ազգային-ազատագրական պայքարի նոր վերելքով:

Պատմաքաղաքական բարդ պայմանների պատճառով Լեոնային Ղարաբաղը, ինչպես մյուս հայկական մարզերը, դուրս մնացին Մայր Հայաստանից: Նման վայրերում հայկական ոգին բարձր պահելու համար բարձրագույն դպրոցի դերը ավելի էր կարևորվում:

Լեոնային Ղարաբաղում բարձրագույն դպրոցի ստեղծումը հնարավոր էր միայն Մայր Հայաստանի բազմակողմանի աջակցության շնորհիվ: Հարկ է նշել, որ 1913թ. օգոստոսին, երբ Շուշիում հանդիսավոր պայմաններում նշվում էր Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի հիմնադրման 75-ամյա հոբելյանը, կոլեկտիվին հեռագրել էր Մեծ Լոռեցին. «<Այսօր, երբ պատմական Ղարաբաղը հայրենի բարձունքներում այնպես ուժգնորեն ամրացնում է յուր հոգևոր կրթության միջնաբերդը՝ տոնելով նրա գոյության 75-ամյակը, հրճվում են աշխարհասփյուռ բոլոր հայերը: Կեցցե պանծալի Ղարաբաղը: Թող նրա որդիները լինեն բարձր ու անսասան, ինչպես նրա հսկայական լեռներն են>>»: Մայր Հայրենիքի օժանդակություն հասկացության մեջ մենք ներառում ենք ամենից առաջ Հայաստանի հանրապետության ժամանակաշրջանի առաջադեմ մտավորականությանը՝ սկսած 1918թ.-ից մինչև 60-ական թթ.-ը:

Եթե Անդրկովկասում, այդ թվում՝ Հայաստանում, համալսարանի բացման արգելքը ցարիզմի խտրական քաղաքականության դրսևորումներից էր, որը հմտորեն պատճառաբանվում էր «<Ֆինանսական դժվարություններով>>», ապա Խորհրդային տարիներին Լեոնային Ղարաբաղում բարձրագույն դպրոցի բացման արգելքն Ադրբեջանի իշխանությունների կողմից վարվող հայահալած քաղաքականության պարզ դրսևորումն էր:

Խորհրդային իշխանության տարիներին Մայր Հայաստանի մտավորականությունը պարբերաբար ահագանգել էր Մոսկվային՝ Ղարաբաղի նկատմամբ գործած պատմական անարդարությունը շտկելու համար և ոչ մի անգամ անուշադիր չէր եղել դարաբաղցիների հանդեպ: Աներևակայելի խանդավառությամբ են դարաբաղցիներն իրենց հողում ընդունել Մետաքսե Միմոնյանին, Գուրգեն Ջանիբեկյանին, Վարդգես Պետրոսյանին, Սիլվա Կապուտիկյանին, Վահրամ Փափազյանին, Հրաչյա Մաթևոսյանին և այլոց: Ուրեմն՝ ժողովրդի ու նրա առաջատար մտավորականության մեջ միշտ վառ է մնացել Մայր Հայաստանի հետ Ղարաբաղի վերամիավորման հույսի կանթեղը:

Ժամանակակից հասարակագիտական, հրապարակախոսական մտքի ամենաակտիվ ուղղություններից մեկը խորհրդային իրավակարգի բազմակողմանի վերլուծությունն ու քննադատությունն է: Այդ քննադատությունն ունի ինչպես իր օբյեկտիվ հիմքերը, այնպես էլ՝ սուբյեկտիվ մոտեցումները: Բնական է, որ հինը միշտ ժխտվում է, իսկ նորը կայացման

հակասական ընթացքի մեջ է: Հնի դիալեկտիկական բացառումը միաժամանակ ենթադրում է հնի որոշակի դրական հատկանիշների պահպանում: Դիալեկտիկական մեթոդոլոգիային ձեռք մեկնելու մեր նպատակը խորհրդային իրավակարգի կողմից կրթության, գիտության ու մշակույթի զարգացման գործընթացին առաջնակարգ նշանակություն տալու դրական գնահատումն է: Իրոք, այդ հսկա միության մեջ, անցյալ դարի 20-ական թվականներից սկսած, անգրագիտության վերացման, դպրոցական ցանցի լայնածավալ ընդլայնման, ազգային մշակույթների աշխուժացման շարժումը պատմականորեն նշանակալի դեր են կատարել ժողովուրդների հոգևոր կյանքում: Եթե այս առումով անդրադառնանք խորհրդային իշխանության տարիներին Լեոնային Ղարաբաղում գիտության, կրթության և մշակույթի զարգացման գործընթացին, ապա կարելի է ասել, որ, չնայած ադրբեջանական իշխանություններն ամեն կերպ ձգտել են արգելակել հայոց լեզվի, հայ ազգային մշակույթի արժեքների, ժողովրդական ավանդույթների ամրապնդմանն ու տարածմանը, դարաբաղին իր համառ բնավորության և կրթական ասպարեզում հայ դպրության նվիրյալների շնորհիվ կարողացել է անգամ առաջադիմական ընթացք ապրել:

Խորապես մտահոգված լինելով Ինքնավար մարզում անհրաժեշտ կադրերի պատրաստման խնդրով՝ հայրենասեր գործիչներ Հայկ Բալայանը, Արշավիր Քամալյանը, Արսեն Խաչատրյանը, Կարո Դավթյանը, Սարգիս Աբրահամյանը, Սուրեն Հայրապետյանը, Գրիգոր Գրիգորյանը, Սարգիս Արամյանը և շատ ուրիշներ երազում էին Արցախում ունենալ հայկական բարձրագույն ուսումնական հաստատություն:

ԼՂԻՄ-ը խորհրդային Միության միակ ազգային վարչական տարածքն էր, որտեղ չկար բարձրագույն ուսումնական հաստատություն: Հայոց Արևելից Կողմանց նահանգներում, հայությունը կրթական և գիտական ասպարեզներում ունենալով մեծ նվաճումներ, մինչև 20-րդ դարի 60-ական թվականները զրկված էր բուհ ունենալու հնարավորությունից: Մինչդեռ Լեոնային Ղարաբաղին վերաբերող պետական-քաղաքական բոլոր փաստաթղթերում, հանդիսավոր նիստերում, հորեյանական հրատարակություններում Ադրբեջանի իշխանությունների կողմից միանշանակ հայտարարվում էր, որ ԼՂԻՄ-ը ծաղկում ու բարգավաճում է:

Լեոնային Ղարաբաղում բարձրագույն ուսումնական հաստատության ստեղծման գործընթացում իր նշանակալից տեղն ունի Երկամյա մանկավարժական ինստիտուտը, որը բացվել է 1939թ. սեպտեմբերին և գործել մինչև 1953թ.՝ հայերեն, ռուսերեն և ադրբեջաներեն բաժիններով: Ինստիտուտն սկզբում գտնվում էր Շուշիում, այնուհետև տեղափոխվեց Ստեփանակերտ: Ադրբեջանի իշխանությունն ամեն կերպ ձգտում էր մեղադրել ինստիտուտի հայկական բաժնի դասախոսներին ազգայնամոլության մեջ, ոմանք պատժվեցին բանտարկությամբ ու արքտորով: Վարվող ազգային քաղաքականության հետևանքով Ադրբեջանում վերացվում էին ազգային փոքրամասնությունների դպրոցները: Թալիշները, քրդերը,

թաթարները, ավարները, լեզգիները և ուրիշներ ձուլվել էին ադրբեջանցիների հետ: Թերևս ամենակարծր ոսկորը, որը կուլ չի գնացել ադրբեջանական իշխանություններին, եղել է հայերենը և նրանով արտահայտվող հոգևոր արժեքների ամբողջությունը, որը խորհրդային իշխանության տարիներին ձևավորվել է հատկապես Լեռնային Ղարաբաղում: Խորհրդային Ադրբեջանի պետական սահմանների շրջանակներում 60-ական թվականների սկզբներից սկսած՝ Լեռնային Ղարաբաղը, փաստորեն, աստիճանաբար ստանձնում է Ադրբեջանի վարչական տարածքում և դրան բռնակցված իր իսկ Լեռնային Ղարաբաղում հայերենի, հայկական մշակույթի արժեքների, դպրոցի և ազգային ավանդույթների պահպանման կենտրոնի դերը՝ 500 հազար հայերի համար: Ազգային հոգևոր արժեքների պահպանման ու զարգացման համար գործող հիմնական սոցիալական ուժը Ղարաբաղում հայ մտավորականության ջոկատն էր: Անգնահատելի է այս ասպարեզում հատկապես գյուղական վայրերում ուսուցչական կոլեկտիվների դերը:

Ազգայինի պահպանման և Մայր Հայրենիքի հետ վերամիավորման ռազմավարական հիմնախնդրի առաջատար դերը 60-ական թվականներին կատարում էր մարզի մտավորականության սերուցքը: Այդ խմբի ակտիվ գործիչներ էին գրող, պատմաբան Բագրատ Ուլուբաբյանը, մարզխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ Երվանդ Բաղդասարյանը, կուսակցության Մարտունու շրջկոմի առաջին քարտուղար Սերգեյ Աբրահամյանը, Մարտակերտի կուսշրջկոմի առաջին քարտուղար Յակով Բաղունցը, կուսակցության մարզկոմի գյուղատնտեսության բաժնի վարիչ Սերգեյ Ասլանյանը, <<Խորհրդային Ղարաբաղ>> թերթի խմբագիր Լազր Գասպարյանը, մարզային ռադիոհաղորդումների կոմիտեի նախագահ Գրիգոր Մողոմոնյանը, նույն կոմիտեի գլխավոր խմբագիր Գրիգոր Ստեփանյանը, մարզային ռադիոհաղորդումների ավագ խմբագիր, գրող Մաքսիմ Հովհաննիսյանը, կուսակցության մարզկոմի պրոպագանդայի բաժնի վարիչ Հովհաննես Արզումանյանը, գրող, հասարակական-քաղաքական ճանաչված գործիչ Սարգիս Աբրահամյանը, Ստեփանակերտի քաղաքային խորհրդի նախագահ Սերգեյ Շաքարյանը, գրականագետ, հասարակական գործիչ Ժան Անդրյանը, շինարարներ Սերգեյ Գրիգորյանը, Արկադի Մանուչարովը և ուրիշներ:

Անցյալ դարի 60-ական թվականների կեսերին Լեռնային Ղարաբաղի քաղաքական մթնոլորտը փաստորեն բաժանված էր երկու հակադիր բևեռների: Առաջինը ներկայացնում էր ադրբեջանական պաշտոնական իշխանության ռազմավարությունը, որի գերխնդիրը Ղարաբաղի հայաթափումն էր և ինքնավարության լուծարումը: Գուցե Ադրբեջանի պետական այրերը կանխազգացել էին, որ ինքնավարության խորհրդային պետականության ձևը կարող էր օրինական պահանջով փոխարինվել ինքնորոշմամբ և անկախ պետականությամբ: Թվում է, թե զարգացման այսպիսի ընթացքը կանխազգացել է հատկապես Ադրբեջանի ղեկավար Հեյդար Ալիևը:

90-ական թվականների սկզբներին Ադրբեջանի Գերագույն Խորհրդի մի նստաշրջանում պատգամավորներից ոմանք մեղադրեցին Ալիևին՝ 70-ական թվականներին ԼՂԻՄ-ի հանդեպ վարած լիբերալ քաղաքականության համար: Հ.Ալիևը պատասխան ելույթում նշեց, որ այդ տարիներին իր կատարած ամենաարդյունավետ գործերից մեկն այն էր, որ Լեռնային Ղարաբաղում ադրբեջանցի բնակչության թիվն աճել է 10 հազարով:

Լեռնային Ղարաբաղի քաղաքական մթնոլորտի երկրորդ բևեռը մարզի առաջատար մտավորականության կողմից ձևավորված անձնակազմն էր, որն իր ռազմավարական խնդիրն էր համարում ամենից առաջ օգտագործել բոլոր միջոցները երիտասարդության արտահոսքը կանխելու համար: Այս հիմնախնդրի գործոններից մեկը համարվում էր մարզի կենտրոնում հայկական բուհի ստեղծումը: Դա կնպաստեր ոչ միայն մարզի մտավորական խավի հիմքերի ամրապնդմանը, այլև գործնական խթան կհանդիսանար հատկապես գյուղական դպրոցների ցանցի ընդլայնման, կրթության գործի քարելավման համար:

Լեռնային Ղարաբաղում մանկավարժական բուհի ստեղծման նախապատրաստական աշխատանքը հանձնարարվեց կուսակցության մարզային կոմիտեի գաղափարական աշխատանքների գծով քարտուղար Ալեքսանդր Հարությունյանին և մարզգործկոմի նախագահի առաջին տեղակալ Երվանդ Բադդասարյանին: Ալեքսանդր Հարությունյանը (այժմ անհատական թոշակառու) 1967-68 թվականներին Մոսկվայում հանդիպումներ ունեցավ ԽՄԿԿ Կենտկոմի պատասխանատու աշխատողների հետ՝ բուհի անհրաժեշտությունը հիմնավորելով հետևյալ փաստերով՝

ա) Լեռնային Ղարաբաղում և նրա հարևան ադրբեջանական շրջաններում, չհաշված Բաքվի հայությանը, ապրում են 250 հազարից ավելի հայեր, որոնց դպրոցահասակ սերնդի բացարձակ մեծամասնությունը սովորում է հայկական դպրոցներում (ազգությամբ հայ երեխաների մի փոքր խումբ ընդգրկված էր ռուսական դպրոցներում): Հետևաբար՝ ինստիտուտը կունենա ուսանողության համապատասխան քանակ,

բ) մարզի տարածքում և հարակից շրջանների հայկական դպրոցներում կլուծվի ուսուցչական կադրերով ապահովելու հիմնախնդիրը,

գ) քաղաքական առումով հայկական մարզում հայերեն լեզվով մանկավարժական բուհի ստեղծումը կլինի միանգամայն օրինավոր, քանի որ ԼՂ ինքնավար մարզը Խորհրդային միության տարածքում միակ ինքնավար վարչական տարածքն է, որը չունի ազգային բարձրագույն ուսումնական հաստատություն:

Ընդգծենք, որ Ադրբեջանի կազմում խորհրդային իրավակարգի կողմից անհիմն կերպով կազմավորված երկու ինքնավարություններից մեկում՝ Նախիջևանի ինքնավար հանրապետությունում, վաղուց գործում էր մանկավարժական բուհ (60-ական թվականներին ադրբեջանական իշխանություններին արդեն հաջողվել էր Նախիջևանից տեղահանել հայկական էթնոսը և ադրբեջանականացնել հայկական հնադարյան այդ տարածքը): Ի դեպ, Բաքվի երկու մանկավարժական բուհերից բացի, այդ ժամանակ մանկավարժական բուհ էր գործում նաև Կիրովաբադում (այժմ՝ Գյանջա): Հետևաբար, ադրբեջանցի երիտասարդների համար մանկավարժական բուհում սովորելու բացառիկ լայն հնարավորություններ էին ստեղծված: <<Ազգերի ու ժողովուրդների եղբայրության երկրում>> կարծես ոչինչ չէր խանգարում Ստեփանակերտում հայկական մանկավարժական բուհի ստեղծման գործին: Մարզկոմի քարտուղար Ա.Հարությունյանի հաստատումով՝ ԽՍՀՄ Կենտկոմի բաժնի վարիչ Ս.Պ.Տրապեզնիկովը դրական ընթացք է տվել ղարաբաղցիների պահանջին և հանձնարարել իր տեղակալին՝ Կրասնովին, Ադրբեջանի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության հետ միասին ընթացքավորել առաջադրված խնդիրը: Ըստ երևույթին Մոսկվայում քաջ գիտեին, որ երկրում այդ տարիներին ակտիվացող էթնոքաղաքական հակասությունների թեժ կետերից մեկը Լեռնային Ղարաբաղն է: Կուսակցության Կենտկոմի գիտության ու կրթության բաժնի դրական միտումն առանձնանում էր այդ գործոնով ևս: Կենտրոնի ղեկավար մարմինների սեղանների վրա էին Ղարաբաղի 13 գործիչների և Հայաստանի 53 նշանավոր անհատների դիմում-առաջարկները Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորելու մասին, որտեղ անհերքելի փաստեր էին բերված կրթության և մշակույթի բնագավառում Ադրբեջանի իշխանությունների կողմից վարվող հակահայկական քաղաքականության վերաբերյալ:

Ինչպես բոլոր հարցերում, այստեղ նույնպես ադրբեջանական կողմը խնդիրը կարգավորել էր Լեռնային Ղարաբաղը ադրբեջանականացնելու ռազմավարական քաղաքականությամբ: Ինչպիսի հիմնավորումներով է առաջնորդվել ադրբեջանական կողմը Ստեփանակերտում բուհական կառույցի ստեղծման համար: Նախ գործի էր դրվել կոմունիստական գաղափարախոսության քարոզչությունը, որի համաձայն Խորհրդային Միությունում, արդեն իսկ 60-ական թվականներից սկսած, իբր խորհրդային ազգերի ու ժողովուրդների հարաբերությունները զարգանում էին երկու գույնապես ուղղություններով՝ ա) ազգերի զարգացում, բ) ազգերի մերձեցում: Առաջադիմական գործընթաց էր համարվում ազգերի մերձեցումը, որը հիմք պետք է հանդիսանար <<խորհրդային ժողովուրդ>> պատմական նոր ընդհանրության ձևավորման համար: Առաջնորդվելով հասարակագիտական այսպիսի դոկտրինայով՝ Ադրբեջանի բարձրագույն կրթության նախարարությունն ավելի նպատակահարմար գտավ <<ծաղկող ու

բարգավաճող>> ԼՂ ինքնավար մարզում ձեռնարկել հայաթափման նոր քաղաքականություն՝ բացելով ինտերնացիոնալ տիպի բուհական հաստատություն, որտեղ պետք է սովորեն հայ և ադրբեջանցի երիտասարդներ: Դա կնպաստեր դատարկվող դարաբաղյան գյուղերում մահմեդական երիտասարդների բնակեցմանը և միաժամանակ կիրագործվեր մարզում մանկավարժական բուհ ստեղծելու դարաբաղցիների պահանջը:

Այստեղ հարկ է նշել, որ քսաներորդ դարի 50-60-ական թթ. ԼՂԻՄ-ում ադրբեջանական իշխանությունների ծրագրային ազգային քաղաքականության հիմնախնդիրը շարունակում էր մնալ երկրամասի աստիճանական հայաթափումը և այդ միջոցով ԼՂ ինքնորոշման, նաև ինքնավարության հիմնահարցի ավարտումը: Եթե 30-40-ական թթ. ծրագրված այս քաղաքականությունն իրականացվում էր Ադրբեջանի արդյունաբերական քաղաքներում աշխատուժի պակասի պատրվակով մարզի երիտասարդության մասսայական հավաքագրման, ինչպես նաև մարզում <<հայկական նացիոնալիստական, հակախորհրդային խմբերի>> հայտնաբերման ու լիկվիդացման և այլ միջոցներով, ապա նոր պայմաններում փոքր-ինչ այլ երանգավորումներ էր ստանում նույն նպատակային քաղաքականությունը: 50-ական թթ. կեսերին Ն.Ս. Խրուշչովի կողմից տրված ժողովրդավարության փշրանքներն արգելակում էին ԼՂԻՄ-ում ադրբեջանական իշխանությունների բացահայտ հակահայկական բռնապետական քաղաքականությանը: Հետևաբար նոր պայմաններին համապատասխանեցվեց նոր դոկտրինա. ԼՂԻՄ-ը հայտարարվեց գյուղատնտեսական, անասնապահական գոտի: Ադրբեջանում լավ գիտեին, որ ԼՂ գյուղերի մեծ մասը համարյա զրկված էր երիտասարդ աշխատուժից, գյուղերում բնակվում էին մեծ մասամբ ծերության տարիքին հասնող մարդիկ: Ուստի անասնապահական ֆերմաներում աշխատող մարդկանց մեծ կարիք էր զգացվում, որը բավարարվում էր հարևան ադրբեջանական շրջաններից վերաբնակեցվող ընտանիքների հաշվին:

Պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն՝ մարզի բնակչության թիվն անընդհատ նվազում էր: Եթե 1939թ. մարդահամարի տվյալներով մարզում բնակվում էին 150837 մարդ, ապա 1959թ. տվյալներով այդ թիվն արդեն կազմում էր 130406: Բնակչության արտահոսքը Լեռնային Ղարաբաղից կատարվում էր հիմնականում երիտասարդության հաշվին. 20 հազարից ավելի մարդկանցից 11 հազարը 12-19 տարիքի երիտասարդներ էին: Ի դեպ, 30-ական թթ. սկզբներից սկսած տեղի է ունեցել ԼՂԻՄ-ի հայ բնակչության արտահոսք և ադրբեջանցիների ներհոսք: Այդ ժամանակաշրջանում (1939-50թթ.) մարզի հայ բնակչության թիվը նվազել է 23 հազարով, իսկ ադրբեջանցիների թիվն ավելացել է 4 հազարով: Ավելի աչքի զարնվողը նույն ժամանակամիջոցում մարզի հանրակրթական դպրոցներում աշակերտների թվաքանակի նվազումն էր: Եթե 1940-41 ուս. տարում մարզի դպրոցներում սովորում էին 40.766 աշակերտներ, ապա 1960-61 ուս. տարում այդ թիվը նվազեց 14 հազարով: Այս թվերին համապատասխանող զարգացման



գործընթացում բնականաբար աճում էր նաև մշակույթի ադրբեջանական օջախների թիվը, ավելանում ադրբեջանական դպրոցների քանակը, ադրբեջաներենը պարտադիր ուսուցման առարկա էր դարձել հայկական դպրոցներում, և ուսումնական ծրագրերից դուրս էր մղվել «Հայ ժողովրդի պատմություն» առարկան, վարչական պաշտոնական գործընթացից՝ գրական հայերենը, ծայրահեղորեն թուլացել ԼՂ և Հայաստանի կրթամշակութային կապը և այլն: Մի խոսքով՝ «ադրբեջանականացում» քաղաքականությունն անարգել կերպով գործնական բնույթ ստացավ ԼՂԻՄ հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Կարելի է եզրահանգել, որ 60-ական թթ. ադրբեջանական իշխանությունների՝ ԼՂԻՄ-ի նկատմամբ տարվող հայաթափման ռազմավարական քաղաքականության արտահայտություններից մեկը հանդիսացավ Ստեփանակերտում Բաքվի մանկավարժական ինստիտուտի «ինտերնացիոնալ կառուցվածքով» մասնաճյուղի ստեղծումը, որը միաժամանակ հիմք պետք է դառնար մարզի միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում ադրբեջանական բաժինների բացման և ավելի մեծ ընդգրկմամբ բազմատեղ պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարանի ստեղծման համար, որտեղ գերազանցապես պետք է ընդունվեին երիտասարդներ հարևան ադրբեջանական շրջաններից: Սա էր Ստեփանակերտում մասնաճյուղի ստեղծման նպատակային շարժառիթը, որը ադրբեջանական կուսակցական քարոզչական մեքենայի կողմից մեկնաբանվում էր իբրև հայ ժողովրդի կրթության ու մշակույթի «զարգացման» համար հոգատարության կոնկրետ արտահայտություն:

Բնական է, որ դժվարություններ պետք է ստեղծվեին ինքնուրույն ինստիտուտի համար համապատասխանող ուսումնական շենքի, կադրերի և այլ առումներով: Այս հարցում նույնպես լուծում գտնվեց. սկզբնապես ավելի նպատակահարմար էր, որ բուհական այդ նոր հաստատությունը լիներ Ադրբեջանական մանկավարժական մայր բուհի մասնաճյուղը: Դիվանագիտական այսպիսի վերլուծականով Ադրբեջանի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարությունը 1969թ. ամռանն արձակեց հրաման՝ Ստեփանակերտում Ադրբեջանի Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղ բացելու մասին, որտեղ ուսուցումը պետք է ընթանար հայերեն և ադրբեջաներեն լեզուներով:

Ադրբեջանի իշխանություններն ակնկալում էին, որ մարզկենտրոնում զուտ հայկական բարձրագույն ուսումնական հաստատության ստեղծումը կնպաստի մարզի հայ բնակչության ազգային ինքնագիտակցության բարձրացմանը, և նման օջախում կձևավորվի ազգային մտավորականության նոր ջղկատ, ինչպես նաև ուսանողական մի խավ, որն անտարբեր չէր կարող լինել քաղաքական գործընթացների, հատկապես՝ մարզում իրագործվող ազգային քաղաքականության նկատմամբ: Ուստի նման «վտանգներից» խուսափելու նպատակով անհրաժեշտ համարվեց գտնել այնպիսի մի տարբերակ, որը

միաժամանակ կղիտվի իբրև Ղարաբաղի հայության նկատմամբ հոգատար վերաբերմունքի և ազգային մշակույթի պահպանման ու զարգացման դրսևորում, իսկ մյուս կողմից բավականին լավ միջոց կլինի մարզկենտրոնում <<ինտերնացիոնալ բնույթի>> բարձրագույն ուսումնական հաստատության ստեղծումը:

Որոնք էին այս հրամանի հեռանկարային նպատակները.

ա) բացվող ուսումնական կառույցն ինքնուրույն միավոր չէ: Այն աղբյուրներից մանկավարժական մայր բուհի մասնաճյուղ է, հետևաբար ամբողջությամբ կախված է նրանից,

բ) ստեղծվող ուսումնական հիմնարկում ուսուցումը կտարվի հայերեն և աղբյուրներեն լեզուներով,

գ) քանի որ ուսուցումը կտարվի երկու լեզուներով, ապա նպատակահարմար կլինի վարչական գործավարությունը վարել երրորդ՝ ռուսերեն լեզվով,

դ) ինքնավար մարզում կձևավորվի աղբյուրներից մանկավարժական լեզվի ու մշակույթի օջախ, որը, Բաքվի ակտիվ աջակցությամբ, աստիճանաբար իր գերակայությունը կստեղծի հայկականի նկատմամբ՝ մանավանդ, որ <<հայկական նացիոնալիզմի>> գաղափարների թափանցումը կանխելու պատրվակով կբացառվեն ստեղծվող բաժանմունքի հետ Երևանի ակտիվ կապերը,

ե) անմիջական ձևով կնպաստի մարզի էթնիկական քարտեզի փոփոխմանը,

զ) Ստեփանակերտում այդպիսի հաստատության կայացումը հիմք կհանդիսանա Բաքվում գործող հայկական վերջին գիտակրթական օջախը՝ մանկավարժական ինստիտուտի հայկական բաժինը փակելու համար:

Վերոնշյալ նպատակները ԼՂԻՄ ղեկավարների առջև բացահայտվեցին այն ժամանակ, երբ նրանց հայտնի դարձավ, որ 1969թ. սեպտեմբերի 1-ին իր ուսումնական գործընթացը կսկսի վերոհիշյալ մասնաճյուղը: Հանուն ճշմարտության պետք է ընդգծել, որ հարցի այս եղանակով լուծումն առաջին հերթին տհաճություն պատճառեց հենց կուսակցության մարզկոմի և մարզխորհրդի ղեկավարությանը (Գ.Մելքունյան, Ալ.Հարությունյան, Մ.Օհանջանյան և Ե.Բաղդասարյան):

Բնականաբար, մարզի ղեկավարության առջև դրվեց <<ինչ անել>> հարցը: Փորձ եղավ հրաժարվել առաջարկվող տարբերակից՝ պատճառ ունենալով շենքի և դասախոսական կադրերի բացակայության խնդիրը: Մյուս կողմից՝ մարզի ղեկավարությունը շատ լավ գիտեր, թե ինչ հետևանք

կունենար այդ մերժումը. ԽՍՀՄ-ն ու Ադրբեջանի ղեկավարությունը հնարավորություն կունենան մեղադրել ղարաբաղի հայ մտավորականությանը և ղեկավարությանը որպես նացիոնալիստների և նրանց կստիպեն հեռանալ ԼՂ տարածքից: Նշենք, որ Ադրբեջանի իշխանությունն սպասում էր, որ Ստեփանակերտն անպայման կմերժի առաջարկված տարբերակը, և Բաքուն հիմք կունենա մեղադրելու հայերին ազգայնամոլության մեջ: Մասնաձյուղը բացելու համար Ադրբեջանի իշխանությունները ոչ մի նյութական օժանդակություն չկատարեցին:

Այսպիսով, 1969թ. սեպտեմբերին Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի նախկին շենքի մի մասում՝ (այժմյան ԱրՊՀ առաջին մասնաշենք), սկսվեցին բուհական ուսումնական պարապմունքները Բաքվի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաձյուղում: Մասնաձյուղի տնօրեն նշանակվեց փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ Շ.Մ.Աբրահամյանը (այժմ փիլիսոփայության ամբիոնի պրոֆեսոր): Նշենք, որ ուսումնական գործընթացն ընթանում էր միայն առաջին կուրսում՝ հայոց լեզու և գրականություն, մաթեմատիկա, ֆիզիկա մասնագիտություններով: Մասնաձյուղն ուներ երկու ամբիոն՝ հայոց լեզվի և գրականության և մաթեմատիկայի: Բուհի առաջին դասախոսներն էին Շ.Մ.Աբրահամյանը, պրոֆ. Գ.Գ.Անտոնյանը, դոցենտներ Ս.Ա.Խանյանը, Գ.Խ.Բաղդասարյանը, Մ.Ա.Բաղրամյանը, Ա.Ս.Մխիթարյանը, Ա.Ս.Իոնեսյանը, Ա.Բ.Ներսիսյանը, Ռ.Լ.Առաքելյանը, Ա.Ս.Ներսիսյանը, Ժ.Ջ.Անաստասյանը, Ժ.Մ.Բաղդասարյանը և Ռ.Հ.Մահակյանը:

1973թ. հուլիսին պետք է նշվեր ԼՂԻՄ կազմավորման 50-ամյա հոբելյանը: Բայց քանի որ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմը ծրագրել էր լուրջ փոփոխություններ կատարել ԼՂ մարզկոմի ղեկավար կազմում, հոբելյանական տոնակատարությունը հետաձգվեց մի քանի ամսով: Շուտով Ադրբեջանի կոմկուսի կենտկոմը Ղարաբաղում անսահմանափակ իշխանությունը հանձնեց Բ.Ս.Կևորկովին, որի գերխնդիրն էր իրական պայմաններ ստեղծել ԼՂ-ում հայ և ադրբեջանցի բնակչության թվակազմի հավասարեցումը, ինչն էլ իր հերթին հիմք կհանդիսանար մարզի ինքնավարության լուծարմանը և ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ լուծմանը: Կուսակցության մարզկոմի նորանշանակ առաջին քարտուղար Բ.Կևորկովի անմիջական ղեկավարությամբ Ստեփանակերտում կայացավ ԼՂԻՄ կազմավորման 50-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստ, որտեղ Ադրբեջանի ղեկավար Հ.Ալինն իրեն հատուկ լկտիությամբ, խեղաթյուրելով փաստերը, ընդգծեց, որ Ադրբեջանի ղեկավարությանը հաջողվել է ԽՍՀՄ բարձրագույն կրթության նախարարությանը համոզել, որ ԼՂ-ն ունենա իր ինքուրույն մանկավարժական բուհը: Ալինը փորձում էր արդարացնել Ադրբեջանի կողմից վարվող քաղաքականությունը՝ բոլոր մեղքերը բարդելով կենտրոնական իշխանությունների վրա:

Եվ այսպես՝ Ղարաբաղի ամբողջ հայության երկար ու անհավասար պայքարի արդյունքում բացված մանկավարժական ինստիտուտն Ադրբեջանի ղեկավարությունը ծրագրում էր օգտագործել իր նպատակների համար: Մակայն, ի պատիվ մանկավարժական ինստիտուտի դասախոսների ամենօրյա հայրենանվեր աշխատանքի, բուհը դարձավ ոչ միայն կադրերի դարբնոց, այլ նաև ազգային գաղափարախոսության ջահակիր հաստատություն: Շ.Մ.Աբրահամյանը մի քանի ամիս հետո, իբր Լեռնային Ղարաբաղում տեղ գտած ազգայնամոլական խմբի անդամի, ազատվեց աշխատանքից: Տնօրենի պարտականություններն ստանձնեց Յու.Վ.Մարտիրոսյանը (Մարտակերտի շրջխորհրդի նախագահի տեղակալ), որն աշխատեց մինչև 1974թ. մարտ ամիսը:

1974թ. գարնանն ինստիտուտի ռեկտոր է նշանակվում պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Սերգեյ Գերասիմի Սարկիսովը: Նա հմուտ կազմակերպիչ էր, ազնիվ և օրինապաշտ մարդ: Աշխատեց ընդամենը 1,5 տարի: Այդ ընթացքում նա համոզվել էր, որ ուսումնական և գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ.Կուլիևը հանցագործության աստիճանի օրինազանցություններ է կատարում, ինչի մասին զեկուցեց մարզկոմ, բայց, օժանդակություն չստանալով, ստիպված էր ինքը պաշտոնաթող լինել:

Ս.Գ.Սարկիսովին փոխարինեց մանկավարժական գիտ. թեկնածու, դոցենտ Սերգեյ Եփրեմի Խալատրյանը, որն աշխատում էր Բաքվի միջնակարգ դպրոցներից մեկում՝ որպես տնօրեն: Մանկավարժական աշխատանքի հարուստ փորձը նրան օգնեց զգալի բարձրացնելու ինստիտուտի ուսումնական գործընթացը: Ս.Ե.Խալատրյանի պաշտոնավարումը տևեց մինչև 1982թ.:

1982-89թթ. ինստիտուտի ռեկտորի պաշտոնը վարեց փիլիսոփայական գիտ. թեկնածու, դոցենտ Սերգեյ Ալեքսանդրի Սարգսյանը:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ 70-80-ական թթ. ինստիտուտի հայկական բաժնի աշխատանքը գտնվում էր մարզկոմի և ՊԱԿ-ի անմիջական հսկողության տակ: Եղած մեղադրանքները վերաբերում էին միայն հայկական բաժնին: Այսքանով հանդերձ՝ բուհի հայ դասախոսները ձգտում էին պահպանել հայկական ոգին:

1974-89թթ. ինստիտուտում գործում էր չորս ֆակուլտետ՝ բանասիրական, ֆիզիկա-մաթեմատիկական, պատմական և տարրական կրթության մանկավարժությունից և մեթոդիկայի: Ամբիոնների թիվը հասել էր ութի: Եթե 1974թ. ինստիտուտում սովորում էր 1365 ուսանող, որից 856-ը՝ հայեր, ապա 1988թ. կար արդեն 1900 ուսանող, այդ թվում՝ 1225-ը՝ հայեր: 1973-74 ուս. տարում բուհում աշխատում էր 59 հաստիքային դասախոս, որից 42-ը հայեր էին, իսկ 1988թ.՝ ավելի քան 120, որից 78-ը՝ հայեր:

Ինստիտուտում դասախոսում էին պրոֆեսորներ Ս.Ս.Բաղդասարյանը (ֆիզիկա), Վ.Գ.Ավանեսյանը (մեխանիկա), դոցենտներ Ա.Ս.Իոնեսյանը

(պատմություն), Ս.Ա.Հարությունյանը (փիլիսոփայություն), Շ.Մ.Աբրահամյանը (փիլիսոփայություն), Ե.Հ.Բաղդասարյանը (քաղաքատնտեսություն), Օ.Ե.Եսայանը (քաղաքատնտեսություն), Ս.Ա.Խանյանը (հայ գրականություն, այժմ՝ ք.գ.դ., պրոֆեսոր), Ս.Վ.Դադայանը (պատմություն, այժմ՝ պրոֆեսոր), Գ.Հ.Հարությունյանը (մանկավարժություն, այժմ գիտ.դոկ., պրոֆեսոր), Վ.Ս.Ավանեսյանը (պատմություն, այժմ՝ գիտ.դոկ., պրոֆեսոր), Կ.Ս.Դավթյանը (բարբառագիտություն), Յու.Գ.Անաստասյանը (մաթեմատիկա), Ս.Կ.Պետրոսյանը (մաթեմատիկա, այժմ՝ պրոֆեսոր), Ռ.Լ.Առաքելյանը (մաթեմատիկա), Ժ.Ս.Ֆարսյանը (մաթեմատիկա), Հ.Խ.Խաչատրյանը (մաթեմատիկա), Ս.Ս.Մարյանյանը (մաթեմատիկա), Գ.Ս.Հարությունյանը (ֆիզիկա), Ա.Ն.Աբրահամյանը (քիմիա), Հ.Ս.Մովսիսյանը (ֆիզիկա), Ա.Վ.Թովմասյանը (մանկավարժություն), Է.Զ.Բաղդասարյանը (մանկավարժություն), Բ.Ս.Ասլանյանը (մեխանիկա), Դ.Ս.Գաբրիելյանը (ռուսաց լեզու), Ա.Ս.Մարգարյանը (օտար լեզու) Կ.Ս.Արամյանը (ֆիզիկա), Մ.Ա.Արզումանյանը (ռուսաց լեզու), Ա.Ս.Մարգարյանը (օտար լեզու), Ռ.Ս.Պետրոսյանը (անգլերեն լեզու), Մ.Բ.Յարամիշյանը (հայոց լեզու), Լ.Բ.Ղալայանը (գեղանկարչություն, այժմ՝ վաստակավոր նկարիչ), Մ.Ե.Մելիքսեթյանը (հոգեբանություն), Ս.Ս.Սողոմոնյանը (պատմություն), Հ.Վ.Գրիգորյանը (մաթեմատիկա, այժմ՝ պրոֆեսոր), Ռ.Ե.Առուշանյանը (կենսաբանություն), Վ.Շ.Մանասյանը (մաթեմատիկա), Ա.Բ.Ադայանը (կենսաբանություն), Գ.Դ.Դանիելյանը (հոգեբանություն), Ն.Ա.Ավագիմյանը (փիլիսոփայություն), Ղ.Ս.Բաբայանը (փիլիսոփայություն, 1981-92թթ., փ.գ.թ.), Լ.Ս.Գրիգորյանը (հայ գրականություն), Օ.Ե.Բաբայանը (հայոց լեզու, այժմ՝ պրոֆեսոր), Ս.Ա.Մինասյանը (հայոց լեզու), Վ.Հ.Աթոյանը (ֆիզիկա), Ա.Ս.Աթոյանը (հայ գրականություն), Ռ.Վ.Հովսեփյանը (ռուսաց լեզու), Ռ.Ա.Բալայանը (պատմություն), դասախոսներ Վ.Ա.Սաֆարյանը (պատմություն, այժմ՝ գիտ.թ.), Ի.Գ.Մարտիրոսյանը (այժմ՝ դոցենտ), Գ.Շ.Պետրոսյանը, Ա.Վ.Ներսիսյանը, Լ.Ս.Մելքումյանը, Գ.Ս.Սողոմոնյանը, Ս.Ե.Հովհաննիսյան-Հուսնունցը, Ա.Հ.Սարգսյանը (ֆիզիկա), Ս.Սայիանը (պատմություն), Ա.Պ.Պետրոսյանը (պատմություն), Գ.Ս.Աֆանեսյանը (ֆիզիկա), Կ.Գ.Ուլուբաբյանը, Կ.Խ.Բեզլարյանը, Վ.Պ.Դրոկինը, Ա.Ե.Մարտիրոսյանը, Ս.Ա.Հարությունյանը (այժմ՝ գիտ.թ., դոց., ֆիզկուլտուրա), Ա.Ս.Շահնազարովան (օտար լեզու), Ա.Գ.Շահինջանյանը (մաթեմատիկա), Ս.Ս.Գրիգորյանը, Շ.Ս.Միքայելյանը (ընդ.տեխ.առարկաներ), Ս.Ս.Ղազանյանը (ռուսաց լեզու), Լ.Ռ.Բեզլարյանը (ռուսաց լեզու), Կ.Ա.Հակոբյանը (հայոց լեզու),

և  
զատ  
ուրիշներ:  
Համատեղ աշխատանքի շնորհիվ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտն իր համեստ տեղն ունեցավ հայոց բազմադարյան գիտամշակութային ձեռքբերումների շարքում:

**ՄԱՅՐ ԲՈՒՀԸ 1988-94թթ.**

Ամեն մի կայացած բարձրագույն ուսումնական հաստատության առաջնահերթ գործառույթներից են ինչպես ժողովրդական տնտեսության, կրթության, գիտության ու մշակույթի և պետության կյանքում կարևոր նշանակություն ունեցող ոլորտների համար մասնագետներ պատրաստելը, այնպես էլ՝ ազգային գաղափարախոսության ձևավորմանը, հասարակական գիտակցության աճին, իսկ հարկ եղած դեպքում՝ նաև հայրենի պետության պաշտպանության գործին ըստ ամենայնի նպաստելը: Այս տեսակետից Արցախի մայր բուհը գտնվեց իր կոչման բարձրության վրա և հիշարժան ձեռնարկումներով հարստացրեց ազգային-ազատագրական պայքարի տարեգրության էջերը:

Խորհրդային Ադրբեջանի բռնատիրության պայմաններում բուհում կրթություն էր ստանում հիմնականում մեր մարզի երիտասարդության սերունդը: Ուժեղ վերահսկողության պայմաններում այդ տարիներին մարզի մտավորականության դարբնոցում անթեղված էին մնում ազատագրական պայքարի կայծերը, որոնք բռնկվեցին ԽՍՀՄ-ում վերակառուցման ուղղույթի որդեգրումից ի վեր: Հասարակության մեջ տեղի ունեցող խմորումներն իրենց զգայուն արտահայտություններն ու դրսևորումները գտան Ստեփանակերտի բուհում: Ազատագրական պայքարի գաղափարներով ոգևորվեցին ուսանողները, որոնք գաղտնաբար իրենց ջանքերն էին գործադրում գաղափարաքարոզչական և նման մի շարք միջոցառումների կազմակերպչական աշխատանքների ուղղությամբ:

Դեռևս 1986թ. ապրիլից ընդհատակում գործող <<Արցախական միության>> աշխատանքներին մասնակցում էին հայ ուսանողներ, որոնք պայքարի փորձ ձեռք բերեցին ու ազատագրական պայքարի կրողներ դարձան՝ հետագայում ստանձնելով ողջ ուսանողության ներուժի կոորդինացման ու կազմակերպման, գաղափարական կողմնորոշման եւ իրենց հետևից տանելու առաքելությունը:

1988թ. փետրվարին, երբ արցախահայությունը ոտքի ելավ մայր Հայաստանի հետ վերամիավորվելու պահանջով, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնին հակադրվեց ադրբեջանականը: Ադրբեջանցի դասախոսները համախմբվեցին ինստիտուտի ուսումնական և գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Ն.Կուլիևի շուրջը: Վերջինս ստեղծել էր <<Գորշ գայլեր>>-ի խումբ: Նրանք բացեիբաց դիմում էին հայ դասախոսներին. <<Եթե չեք ցանկանում մնալ Ադրբեջանի կազմում, կարող եք թողնել Ղարաբաղը և հեռանալ>>: Ադրբեջանցի դասախոսները մեկնում էին Ադդամ, Ֆիզուլի, Ջաբրայիլ, Կուբաթլու, Լաչին, Եվլախ, Բարդա, Միրբաշիր, Քյալբաջար և թուրք բնակչությանը հրահրում հայերի դեմ, կոչ անում զինվելու :

Բնականաբար, պայքարի ելած հարազատ ժողովրդի գաղափարական ուղղորդումից անմասն չէր մնում նաև բուհի դասախոսական կազմը, հատկապես՝ նրա քաղաքականապես առավել ակտիվ մասը: Բավական է հիշել, որ 1988թ. փետրվարի 13-ի առաջին հանրահավաքը, որն առանց

ուսանողության ակտիվ մասնակցության դժվար է պատկերացնել, առաջինը մտավ հրապարակ: Հանրահավաքում առաջինը ելույթ ունեցավ ինստիտուտի դասախոս Գրիգորի Աֆանասյանը: Իսկ երբ ԼՂԻՄ մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը փետրվարի 20-ին ընդունեց պատմական որոշումը, որը դարձավ ընդհատակից Շարժման դուրս գալու եւ համաժողովրդական պայքարի ծավալման ազդակը, մանկավարժական ինստիտուտի պրոֆեսորադասախոսական ողջ կազմը դարձավ մեր ժողովրդի գաղափարաքաղաքական խոսափողը:

Հայ դասախոսները հստակ պատկերացնում էին իրենց անելիքները.

1. Կազմակերպել ուսանողության մասնակցությունը շքերթներին և հանրահավաքներին:

2. Կապեր ստեղծել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի և Հայաստանի բուհերի ուսանողության միջև՝ ազատագրական պայքարին առավել ակտիվ բնույթ հաղորդելու նպատակով:

3. Հանդես գալ հանրահավաքներում, Ստեփանակերտ ժամանած քաղաքական և հասարակական գործիչների առջև՝ շարժման նպատակների պարզաբանման վերաբերյալ:

4. Գրավոր պատասխանել ազերի վայ պատմաբանների և գրողների ստահող ելույթներին՝ Արցախը ադրբեջանական-ավանդական տարածք հայտարարելու, հայկական նյութական և հոգևոր մշակույթի հուշարձանները սեփականելու դեմ:

5. Հեռագրեր և նամակներ հղել ԽՍՀՄ Կենտկոմ, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ, ԽՍՀՄ նախարարների խորհուրդ և այլ ատյաններ:

6. Պատրաստել պայքարի բովանդակությանը վերաբերող կարգախոսներ, լոզունգներ, տողացույցեր:

7. Անհրաժեշտության դեպքում կազմակերպել դասադուլներ, նստացույցեր, հացադուլներ:

8. Պատրաստ լինել դիմակայելու թշնամու ոտնձգություններին և հարձակումներին:

9. Մասնակցել ժողովրդական բանագնացությանը Մոսկվա:

Անմիջապես նշենք, որ 1988թ. մայիսի 2-ին Արցախից Մոսկվա ժամանած բանագնացների խմբում եղել են մեր բուհի դասախոսներ Հ.Գրիգորյանը, Ա.Մխիթարյանը և Լ.Ղալայանը: Վերադառնալով Մոսկվայից՝ Երևանի թատերական հրապարակում կես միլիոնանոց հանրահավաքում ելույթ են ունեցել Հ.Վ.Գրիգորյանը և Ա.Ս.Մխիթարյանը, որոնք կոչ են արել հրավիրել Խորհրդային Հայաստանի Գերագույն Խորհրդի նիստ և Լեռնային Ղարաբաղն ընդունել Հայաստանի կազմի մեջ:

Տարերքի մեջ էր ուսանողությունը: Այն աստիճանաբար դառնում էր պայքարի շարժիչ ուժերից մեկը: Ուսանողության գործողությունները համակարգելու և ջանքերը համախմբելու նպատակով մանկավարժական ինստիտուտում ընդհատակյա կազմակերպություններն ու միություններն

ավելի ակտիվացան: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի մի շարք ներկայացուցիչներ աջակցում և խրախուսում էին քաղաքականապես ակտիվ երիտասարդներին: Հարկ է նշել ումանց անունները՝ Սերգեյ Շահվերդյան, Աշոտ Պողոսյան, Հակոբ Խաչատրյան, Հակոբ Բաղմանյան, Դավիթ Իշխանյան, Վարդան Ավետիսյան, Ֆելիքս Գաբրիելյան, Աշոտ Ղուլյան, Նարինե Աղաբալյան, Ալիկ Սարգսյան, Սենոր Հասրաթյան, Գագիկ Բեգլարյան, Եղիշե Առուշանյան, Իսահակ Ծատրյան, Մերուժան Մոսիսյան, Նորիկ Դանիելյան, Նարինե Գաբրիելյան, Դավիթ Ոսկանյան, Հայկ Աղաբեկյան, Արթուր Մինասյան, Զորիկ Ղուլյան, Վարդան Բալայան, Գուրգեն Անտոնյան և շատ ուրիշներ:

Ճշմարտությունը հանրության լայն խավերին ու ԽՍՀՄ ղեկավարներին հասցնելու համար հորդաց դասախոսների հեռագրերի ու նամակների հոսքը Մոսկվա, այնուհետև հրապարակվեցին նրանց թղթակցություններն ու հոդվածները <<Խորհրդային Ղարաբաղ>> և այլ պարբերականներում: Ժամանակին օրագրային գրառումներ կատարած դասախոս Լ. Գրիգորյանի վկայությամբ՝ Սեդա Ղազանչյանն այն <<եզակի դասախոսներից էր, որ իր ողջ աշխատավարձն օգտագործում էր՝ հեռագրեր հղելով Գորբաչովին>>: Կարելի է նշել Հ.Գրիգորյանի, Ա.Մխիթարյանի և Լ.Գրիգորյանի հրապարակումը մարզային թերթի 1988թ. մարտի 18-ի համարում, Ս.Դադայանի և Ս.Խանյանի բողոք-նամակը ադրբեջանցի վայ-գիտնականներից մեկի գրքի հանիրավի կարևորման դեմ և այլն:

Ուսանողներին և դասախոսներին ավելի ու ավելի հաճախ կարելի էր տեսնել հանրահավաքներում ու ցույցերում: Բուհից առաջին հեռագիրը Գորբաչովին, ըստ Լ.Գրիգորյանի, ուղարկվել էր 200 ուսանողների ստորագրությամբ: Դասախոսներ Հ.Գրիգորյանի, Գ.Աֆանասյանի, Ա.Մխիթարյանի, Հ.Մովսիսյանի, Ս.Դադայանի, Կ.Արամյանի, Ռ.Բալայանի, Շ.Աբրահամյանի, Ս.Ղազանչյանի, Լ.Գրիգորյանի, Ս.Խանյանի և ուրիշների բովանդակալից ելույթներում հիմնավորվում էին արցախահայության պայքարի արդարացիությունն ու անշրջելիությունը:

Ինստիտուտի հայ դասախոսների գաղափարական պայքարի կարևոր էջերից կարելի է համարել այն դիմումը, որն ուղարկվեց ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյին, ՍՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահությանը, միութենական հանրապետությունների ԿԿ կենտկոմներին, Կուսակցության ՌՍՖՍՀ մարզային կոմիտեներին, ինքնավար հանրապետություններին և ինքնավար մարզերին: Դիմումը որպես բողոք գրվել է ՍՄԿԿ Կենտկոմի քարտուղար Ե.Լիզաչովի պրովոկացիոն հայտարարության կապակցությամբ, որն արել է Բաքվում՝ (մայիս 1988թ.) շրջկոմների ղեկավարների հետ ունեցած հանդիպման ժամանակ: Նա հայտարարել էր, որ ԼՂԻՄ-ի հայերի պահանջն անլուծելի է, քանի որ այն կապված է <<ադրբեջանական գործոնի>> հետ: Դրանով իսկ Լիզաչովն արդարացնում էր սուսմագայիթյան դեպքերը և ջուր լցնում ադրբեջանական ջարդարարների ջրաղացին: Դիմումի պատրաստմանը



մասնակցել են Հ.Գրիգորյանը, Մ.Դադայանը, Ա.Մխիթարյանը, Ս.Խանյանը, Կ.Արամյանը: Այն կարդացվել և ընդունվել է Ստեփանակերտ քաղաքի Հաղթանակ (այժմ՝ Ազատության) հրապարակում, 1988թ. մայիսի 28-ին տեղի ունեցած 30 հազարանոց հանրահավաքում: Նման բովանդակությամբ նամակներ էլ մեր մի քանի դասախոսների ստորագրությամբ ուղարկվել են ԽՍՀՄ գլխավոր քարտուղար Մ.Ս.Գորբաչովին:

Ադրբեջանի ղեկավար շրջանները ձգտում էին ամրապնդել ադրբեջանցիների դիրքերը Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում և, պարապմունքները համատեղ շարունակելու անվան տակ, 1988թ. ապրիլ ամսվա սկզբին Շուշիից, Աղդամից և այլ շրջկենտրոններից հատուկ ավտոբուսներով Ստեփանակերտ տեղափոխեցին ադրբեջանական բաժնի ուսանողներին: Դրանով Բաքուն հույս ուներ հակակշիռ ստեղծել հայ ուսանողությանը և խոչնդոտել նրա ակտիվացման դրսևորումներին:

Մակայն մայիսի սկզբներին իրավիճակը մարգում վերստին սրվեց: Շուշի քաղաքից հայ բնակչությունը, մահվան սպառնալիքի տակ, բռնատեղահանվեց հարազատ քաղաքից: Ստեփանակերտում անարդար վերաբերմունքից ու հարևանների կամայականություններից վրդովված ցուցարարները պատասխան քայլերի դիմեցին: Մեծ թվով ստեփանակերտցի երիտասարդներ հավաքվեցին ինստիտուտի դիմաց, միացան հայ ուսանողներին և առաջարկեցին ադրբեջանցի ուսանողներին ազատել բուհը: Դա թերևս միակ ուղին էր ադրբեջանցիների նոր սադրանքներից խուսափելու համար: Հայ երիտասարդները հանդես բերեցին զսպվածություն ու վճռականություն, որից քար էին կտրել անգամ ՊԱԿ-ի աշխատակիցները: Ադրբեջանական ԽՍՀ իշխանությունները, մոսկովյան հովանավորների հետ միասին, նման առիթներ էին որոնում Ստեփանակերտի բուհը փակելու համար, ինչը, նրանց հաշվարկներով, կթուլացներ արցախյան շարժման գաղափարական ներուժը: Ընդ որում, (հիարկե, ոչ պատահականորեն) ադրբեջանական բաժինն ամեն կերպ աշխատում էին պահել փոթորկվող Արցախում: Համոզվելով, որ անհնարին է ադրբեջանական բաժինը պահել Ստեփանակերտում՝ Բաքվի թելադրանքով Խորհրդային Կառավարության հատուկ որոշումով (թիվ 1208, 14 հոկտեմբերի, 1988թ.) ժամանակավոր դադարեցվում է ուսումնական գործընթացը Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում: Նրանք հույս ունեին, որ, փակելով ինստիտուտը, շարժումը կզրկվի գաղափարական կենտրոնից և նահանջ կապրի: Ինստիտուտի դասախոսները և ուսանողներն ընտրեցին պայքարի նոր ձևեր՝ հայտարարելով հացադուլ (Հ.Վ.Գրիգորյան, Հ.Խաչատրյան): Խորհրդային բռնապետական կարգը տարերքի մեջ էր: Հայկական և ռուսական բաժինները տեղափոխվեցին Վանաձոր՝ (Կիրովական) տեղի մանկավարժական ինստիտուտում ուսումնական գործընթացը շարունակելու, իսկ ադրբեջանականը՝ Կիրովաբադ (Գյանջա):

Արցախի պետական համալսարանի վառ էջերից է 1988թ. նոյեմբերի

կեսերից մինչև դեկտեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածը, երբ Ստեփանակերտի մանկավարժականի ուսանողները գտնվում էին Վանաձորում: Ինստիտուտի կոլեկտիվը, ռեկտոր Ռ.Հ.Եղոյանի գլխավորությամբ, արեց ամեն ինչ, որպեսզի Ղարաբաղից եկած ուսանողներն ու դասախոսներն օտարություն չզգան: ԱրՊՀ կոլեկտիվը ցայսօր էլ երախտագիտությամբ է հիշում այս վերաբերմունքը: 1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի անավոր երկրաշարժից հետո արցախցի ուսանողները վերադարձան իրենց հայրենիք և ուսումնական գործունեությունը շարունակեցին Ստեփանակերտում, որտեղ բուհը վերանվանվեց Վանաձորի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունք: Վերջինս փաստացի իրենից ներկայացնում էր ինքնուրույն բուհ. գործում էր ռեկտորատ, չորս ֆակուլտետներ, ամբիոններ, հաշվապահություն: Ֆինանսավորումը կատարվում էր Հայաստանի հանրապետության կառավարության կողմից: Բաժանմունքը դեկավարում էր տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ե.Հ.Բաղդասարյանը:

Բուհի կոլեկտիվի գաղափարաքաղաքական աննահանջ պայքարի տարեգրության փայլուն էջերից մեկն էլ 1990թ. ապրիլի 24-ին կազմակերպած միջոցառումն էր՝ նվիրված 1915թ. Եղեռնի զոհերի հիշատակին: Պոլյանիչկո-սաֆոնովյան ռեժիմի հրահանգով քաղաքում արգելված էին հանրահավաքներն ու շքերթները: Սակայն շարժման ակտիվ մասնակիցները թույլտվություն էին ստացել գոնե այցելել Հայրենական պատերազմի զոհերին նվիրված հուշահամալիր և հիշել 1915թ. Եղեռնի զոհերին: Առիթն առկա էր: Համալիրում, ռադիոկոմիտեի աշխատակիցների աջակցությամբ (նրանք տրամադրել էին բարձրախոսներ) տեղի ունեցավ հանրահավաք: Այն բացեց Հ.Գրիգորյանը, ապա ելույթ ունեցան դասախոսներ Ռ.Բալայանը, Ա.Թովմասյանը, Ս.Խանյանը: Դասախոսներին էին միացել բանաստեղծներ Գ.Գաբրիելյանը և Հ.Բեզլարյանը: Ելույթ ունեցողները դատապարտում էին 1915թ. ցեղասպանությունը և կոչ անում ժողովրդին՝ շարունակել պայքարն ադրբեջանական բռնատիրության դեմ: Արդյունքում տնային կալանքի ենթարկվեցին Ռ.Բալայանը, Գ.Գաբրիելյանը, Ս.Խանյանը և Հ.Բեզլարյանը: Իսկ Հ.Գրիգորյանին և Ա.Թովմասյանին տեղափոխեցին Պյատիգորսկ քաղաքի բանտը՝ մեկ ամիս ժամկետով:

Մեր ինստիտուտում գաղափարական պայքարը երբեք երկրորդական պլանի վրա չի եղել: Դասախոսներն ու ուսանողները պայքարի տարբեր ձևերով ու միջոցներով շարունակել են մարտնչել հանուն Արցախի անկախության ու ազատության: Այդ պայքարի մասին գրվելու է ոչ մեկ անգամ, որովհետև այն մեր պատմությունն է՝ որպես օրինակելի դաս գալիք սերունդների համար, որպես Արցախի աշխարհի ազատագրման ճանապարհի առասպելված վավերագրություն:

Բացառիկ է եղել ինստիտուտի դերը ազգային մշակույթի պահպանման, մտավորականության սովոր ջոկատի ձևավորման, ուսանողական խավի

կազմավորման, երկրամասի պատմության ուսումնասիրության ասպարեզներում: Ինստիտուտի շրջանավարտների մեծ մասը մնացել է Ղարաբաղում: Դա բավականին նպաստել է գյուղական մտավորականության որակավորման բարձրացմանը: 80-ական թթ. սկզբներին գյուղական դպրոցների, մշակույթի տների, գրադարանների և ակումբների համարյա բոլոր աշխատողներն ունեին բարձրագույն կրթություն: Ինստիտուտի շրջանավարտներն աշխատատեղեր են գրավել նաև պետական կառույցներում, կուսակցական և հասարակական կազմակերպություններում: Մի խոսքով՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտն իրականում կատարել է համալսարանի դեր՝ թողարկելով կադրեր ժողովրդական կրթության, մշակույթի, հասարակական ու քաղաքական կառույցների, մասամբ նաև՝ տնտեսական բնագավառի համար: Ինստիտուտի դասախոսական կոլեկտիվը խորհրդային տարիներին երբեք կամակատար չի եղել: Սկզբունքայնության և ազգային արժանապատվության գերազնահատումը միշտ առաջնորդել է դասախոսներին: Վերջիններիս ճնշող մասի վարկանիշը բարձր է եղել ինչպես ուսանողության, այնպես էլ՝ սովորական քաղաքացիների շրջանում:

1992 թվականի հոկտեմբերի 14-ին ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց Լեռնային Ղարաբաղի բուհական կյանքում նորույթ մտցնելու մասին: Անժխտելի է այդ որոշման նշանակությունը տվյալ ժամանակաշրջանի իրադարձությունների և քաղաքական հարաբերությունների պայմաններում: Որոշումն ընդունվել է՝ ընդառաջվելով Ղարաբաղի բնակչության կողմից առաջադրված սկզբունքներին ու պահանջներին, որոնք արտահայտում էին «Վերամիավորում Մայր Հայաստանի հետ», «Մեկ ազգ, մեկ ժողովուրդ, մեկ մշակույթ» համաժողովրդական իմաստ ստացած կոչերում: Որոշումն ավելի շատ քաղաքական նշանակություն ուներ: Մեր կարծիքով՝ այդ որոշմամբ հաստատվում էր ՀՀ պատրաստակամությունը՝ ակտիվացնելու ԼՂՀ-ում գիտակրթական գործունեությունը: Եվ այսպես, 1992թ. արցախյան պատերազմի թեժ օրերին, Վանաձորի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքը և Հայաստանի ճարտարագիտական համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղը վերակազմավորվեցին որպես Լեռնային Ղարաբաղի պետական համալսարան: ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշումը նոր լիցք հաղորդեց ԼՂՀ-ում բուհական կրթությանը:

Սակայն ԱրՊՀ դասախոսներին և ուսանողներին վիճակված չէր լծվելու խաղաղ ստեղծագործ աշխատանքի: Թշմանին փորձում էր տիրանալ նաև Լեռնային Ղարաբաղին: Սկսվել էր արցախահայության հայրենական պատերազմը:

1993թ. հունվարից մինչև 1994թ. հունիս ամիսը համալսարանի ռեկտորի պաշտոնակատար է աշխատել տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Ս.Ավանեսյանը: 1994-95թթ. համալսարանը ղեկավարում էր ԼՂՀ պետական Պաշտպանության կոմիտեի ներկայացուցիչ Բ.Դավթյանը:

Դեպքերի ընթացքը ցույց էր տալիս զինված ինքնապաշտպանության անխուսափելիությունը, որովհետև Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարների ռազմատենչ հայտարարությունները, հայ բնակչության բռնատեղահանություններն ու անմեղ մարդկանց արյունահեղությունը, դաժան շրջափակումն արդեն իսկ պատերազմի ազդանշաններ էին: Ուսանողությունն ընդհատակում քայլեր էր ձեռնարկում զինված կամավորական ջոկատ ստեղծելու ուղղությամբ, ինչն ուղիղ համեմատական էր դեպքերի աստիճանական զարգացմանը և, իհարկե, զինված ինքնապաշտպանության անհրաժեշտության ու անխուսափելիության մեջ մարդկանց (այդ թվում՝ ուսանողության լայն շրջաններին) համոզելու հաջողությամբ:

Դեռևս 1989թ. գարնանը ձեռնարկվեցին ուսանողության ջանքերը համախմբելու քայլեր: Դրա համար անհրաժեշտ էին միավորող գաղափար և ծրագրված ու նպատակաուղղված գործելակերպ, որը կանոնակարգված պիտի լիներ: Այդ խնդիրը լուծելու համար հիմնադրվեց Հայոց ընկերավարական արցախական կուսակցությունը (ՀԸԱԿ), որն առաջադրել էր ռազմաքաղաքական խնդիրներ: Ակտիվիստ ուսանողները երդվեցին ՀԸԱԿ ծրագրի, կանոնադրության, զենքի և եռագույն դրոշի վրա: Դա, փաստորեն, դարձավ նրանց զինվորական ու կուսակցական երդումը: Կուսակցության շարքերն ընդլայնելու նպատակով գաղափարական աշխատանք ծավալվեց ուսանողության շրջանում: Ուսանող-ակտիվիստները գործում էին շատ զգույշ՝ ՊԱԿ-ի լրտեսներից գաղտնի մնալու և պատահական մարդկանցից զերծ մնալու նպատակով: Իսկ կուսակցության անդամների ընտրությունը կատարվում էր խիստ չափանիշներով: Մի քանի ամիս անց արդեն ԿՄԻ Ստեփանակերտի բաժանմունքում զգալի էր ընդհատակյա կազմակերպության աշխատանքը: ՀԸԱԿ-ի հետքերը թաքցնելու նպատակով որոշվում է ստեղծել երիտասարդական կազմակերպություն, որը կոչված էր նոր անդամներով համայնելու կուսակցությունը և փոխարինելու արդեն իսկ հեղինակազրկված կոմերիտմիությանը: Այդպես ստեղծվում է Արցախյան ուսանողաերիտասարդական միությունը (ԱՌԻԵՄ): Ակտիվիստներից Ալիկ Սարգսյանի վկայությամբ՝ մինչև 1989թ. աշունը ձևավորվել էր նաև ուսանողական <<ջոկատը>>:

Հայրենիքի պաշտպանության նպատակով ավելի քան 400 ուսանողներ և բազմաթիվ դասախոսներ մարտադաշտ էլան և իրենց հայրենասիրական ու քաղաքացիական պարտքը կատարեցին... Ուսանողներն աչքի ընկան Բերդաձորի ենթաշրջանի, Հադրութի, Մարտակերտի, Ասկերանի ու Շահումյանի շրջանների ծայրամասային գյուղերի պաշտպանության ընթացքում: Ուսանողներ Է.Բարսեղյանի, Լ.Կարապետյանի, Ի.Հասրաթյանի և այլոց անձնական օրինակն ու խիզախումները ոգեշնչման աղբյուր էին բազմաթիվ ազատամարտիկների համար, ովքեր տոգորվում էին անարգ թշնամուն ջախջախելու, Արցախի սահմաններից հետ շարտելու վճռականությամբ: Ուսանողներն առանձնահատուկ հակում ցուցաբերեցին

դեպի ռազմական գործը, ինչի շնորհիվ նրանց հաջողվեց կարճ ժամանակամիջոցում ձեռք բերել ռազմական գերազանց գիտելիքներ, մարտական տեխնիկային տիրապետելու ունակություններ և, իհարկե, տարբեր ստորաբաժանումներ ղեկավարելու փորձ ու հմտություն: Նրանցից շատերը հետմահու արժանացել են կառավարական պարգևների ու մարտական շքանշանների:

Չնայած պատերազմական իրավիճակին՝ համալսարանը շարունակում էր իր գիտակրթական գործունեությունը: Այդ տարիներին թողարկված մասնագետների մասին կարելի պատկերացում կազմել թիվ 2 աղյուսակից:

**Ցանկ**  
1989-1994թթ. ԱրՊՀ-ի թողարկված մասնագետների  
*Աղյուսակ 2*

N	Մասնագիտություն	Տարեթիվը						
		1989	1990	1991	1992	1993	1994	Ընդ.
1	Հայոց Լ. և գրականություն	27	44	50	11	2	40	174
2	Պատմություն	21	46	58	8	10	40	183
3	Տարրական կրթ. մանկ. և մեթ.	74	61	50	34	23	10	252
4	Մանկավարժություն և հոգեբանություն	-	-	-	3	20	60	95
5	Ֆիզիկա	19	-	12	-	-	-	31
6	Մաթեմատիկա	32	61	34	30	3	20	180
7	Գյուղմեքենայացում	-	-	-	4	-	-	4
8	Ընդհանուր տեխ. առարկաներ	37	45	43	62	23	27	237
9	Հաշվապահական հաշվառում	-	-	-	-	-	14	14
10	Կաթի և կաթնամթերքի տեխնիկա	-	-	-	-	-	8	8
11	Աշխարհագրություն	-	-	-	-	-	2	2
<b>ԸՆԴԱՄՆԵՐ</b>		<b>210</b>	<b>257</b>	<b>247</b>	<b>152</b>	<b>93</b>	<b>221</b>	<b>1180</b>

Այդ տարիներին համալսարանում գործում էր 5 ֆակուլտետ՝ հումանիտար, ֆիզիկա-մաթեմատիկական, քիմկենսաբանական, բանասիրական և գյուղատնտեսական:

Բացվեցին նոր ամբիոններ: Սկիզբ դրվեց նոր մասնագիտությունների՝ անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն լեզուներ, ռուսաց լեզու և գրականություն, նախնական զինվորական և ֆիզիկական պատրաստականություն, ֆինանսներ և վարկ, հաշվապահական հաշվառում, քիմիա, կենսաբանություն, ագրոնոմիա, ագրարային ոլորտի էկոնոմիկա և կառավարում, գյուղմեքենայացում, կաթի և կաթնամթերքների արտադրության տեխնոլոգիա,

կարի արտադրության տեխնոլոգիա: Դասախոսական կոլեկտիվը համալրվեց նոր մարդկանցով. պրոֆեսորներ՝ Գ.Ա.Հակոբյան (ագրոնոմիա), Ա.Թունիկ (մաթեմատիկա), Ա.Ալեքսանյան (ֆիզիկա), դոցենտներ՝ Ս.Ա.Շահնազարյան (անասնաբուծություն), Ե.Մամունց (անասնաբուծություն), Ռ. Խասապետյան (ագրոնոմիա), Վ.Ս.Միրզոյան (քիմիա), Ա.Խ. Դադայան (կենսաբանություն), Ա.Մ. Մաղաքեյան (անատոմիա), Զ.Յա.Ասրյան (մանրէակենսաբանություն), Ա.Բ.Թովմասյան (մեխանիկա), Ռ.Գ.Իսրայելյան (քաղաքաշինություն), Վ.Ռ.Բալայան (պատմություն), Է.Ա.Հայրապետյան (անգլերեն լեզու), Գ.Մ.Բաղունց (ֆիզիկա), Ա.Ս.Ավանեսյան (ֆիզիկա), Ն.Ա.Բաբայան (մաթեմատիկա), Ա.Է.Ավետիսյան (քիմիա), Ա.Յու.Սարգսյան (հայոց լեզու), Հ.Ս.Ղազարյան (հայոց լեզու), Զ.Վ.Բալայան (հայ գրականություն), Ա.Ս.Սարգսյան (պատմություն), Ն.Պ.Սարումյան (պատմություն), Լ.Բ.Հովհաննիսյան (պատմություն), Ա.Ռ.Առստամյան (ֆիզդաստիարակություն), Կ.Լ.Սարոյան (մաթեմատիկա), Լ.Հ.Բաղդասարյան (հայ գրականություն) և շատ ուրիշներ: ԱրՊՀ դասախոսները կարևոր դերակատարություն են ունեցել բանակաշինության գործում: Նրանց մի մասը՝ (Գ.Սարգսյան, Ա.Առստամյան, Լ.Հովհաննիսյան, Գ.Բաղունց, Մ.Գրիգորյան, Մ.Ավագիմյան, Կ.Բեգլարյան, Կ.Ուլուբաբյան և ուրիշներ) զենքը ձեռքին կովել են ազգային իդաերի իրագործման համար:

### **ԱրՊՀ-ն 1995-2009թթ.**

Պատերազմական գործունեությունը հանրապետությունում դադարեցվելուց հետո նոր հեռանկարներ բացվեցին համալսարանի զարգացման համար: Հանրապետության կրթական համակարգը, ագրարային-արդյունաբերական, մշակութային և սոցիալական ոլորտները պահանջում էին մասնագետներ:

Համալսարանը մեծ պատասխանատվությամբ սկսեց աշխատել այդ խնդիրը լուծելու, նշված բնագավառները երիտասարդ մասնագետներով ապահովելու ուղղությամբ:

Մայր բուհը կանգնած էր լուրջ դժվարությունների առջև. ուսումնական մասնաշենքերն ավերված էին, լսարանների, լաբորատորիաների և կաբինետների կահույքը, սարքավորումները պիտանի չէին օգտագործման, գրադարանի գրքային ֆոնդը հավիշտակված էր նախկին խորհրդային բանակի զինվորների կողմից: 1988-92թթ. համալսարանի գլխավոր մասնաշենքում տեղակայված էր գումարտակ: Գրադարանի գրքային ֆոնդը պակասել էր շուրջ 45000 կտոր գրականությամբ:

Իրեն զգացնել էր տալիս տեղեկատվական սուվը: Բուհը չէր ստանում գիտական ոչ մի հանդես: Ֆինանսական միջոցների սղության պատճառով համալսարանի ենթակառուցվածքների վերականգնման աշխատանքները ձգձգվում էին:

Համալսարանի վերականգնողական աշխատանքները ծավալվել էին դեռևս

պատերազմի ժամանակ: Հետագայում նրանք լայն թափ ստացան ռեկտոր Լ.Մ.Եպիսկոպոսյանի (1995-96թթ.), առանձնապես՝ ռեկտոր Պ.Ս.Գևորյանի (1996-2000թթ.) պաշտոնավարման ընթացքում: Այդ տարիներին ընդունելություն է կատարվում նոր մասնագիտությունների գծով՝ իրավագիտություն, քիմիա, կերպարվեստ, օտար լեզուներ, ստոմատոլոգիա, ֆինանսներ և վարկ, կիրառական մաթեմատիկա, փոխադրումների կազմակերպում և կառավարում, լրագրություն և այլն: Ստեղծվեցին նոր լաբորատորիաներ՝ ֆիզիկայի, քիմիայի, հիմնադրվեցին Հայագիտական և համակարգչային կենտրոնները:

2000-02թթ. ռեկտոր, տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Կ.Ն.Աղամյանի պաշտոնավարման օրոք շարունակվում էին վերականգնողական աշխատանքները: Վերանորոգվեց և ձևափոխվեց համալսարանի հանրակացարանը և սկսեց գործել որպես ուսումնական մասնաշենք: Այժմ այստեղ են ընթանում բանասիրական, տնտեսաիրավաբանական և ճարտարագիտական ֆակուլտետների պարապմունքները: Վերանորոգվեց առաջին մասնաշենքի ճակատային մասը և ստացավ ներկայիս տեսքը: Կառուցվեց գոհված ուսանողների հիշատակը հավերժացնող հուշակոթողը (հեղինակ՝ վաստակավոր նկարիչ, դոցենտ Լ.Բ.Ղալայան): Ֆրանսիայի Գլամուր քաղաքի քաղաքապետարանի աջակցությամբ (փոխքաղաքապետ՝ Ա.Արթինյան) վերանորոգվեց գրադարանի ընթերցասրահը, նոր սարքավորումներ տեղադրվեցին համալսարանի տպարանում:

Ռեկտոր Հ.Վ.Գրիգորյանի պաշտոնավարման ժամանակաընթացքում (2002-08թթ.) աշխատանք ծավալվեց համալսարանի իրավական դաշտի ամրապնդման ուղղությամբ, մշակվեցին համալսարանի նոր կանոնակարգերը:

Զգալիորեն հարստացավ համալսարանի նյութատեխնիկական բազան, ստեղծվեց աստղադիտարան, ստոմատոլոգիական կենտրոն: Կառուցվեց ժամանակակից սպորտդահլիճ, շահագործման հանձնվեց համալսարանի եռահարկ շենքը, որը հնարավորություն տվեց առաջին մասնաշենքն ազատել վարչական ստորաբաժանումներից և ուսումնական գործընթացը կազմակերպել միահերթ:

1995-2008թթ. համալսարանը թողարկել է շուրջ 7201 երիտասարդ մասնագետ: Ընդհանուր առմամբ՝ համալսարանը 40 տարվա ընթացքում 57 մասնագիտությունների գծով թողարկել է 12.664 մասնագետ: 2009թ. 29 մասնագիտությունների գծով բուհն ավարտել են 1039 ուսանողներ:

Մայր բուհը պայմանագրեր է կնքել Հայաստանի Հանրապետության մի շարք բուհերի՝ Երևանի պետական համալսարանի, Խ.Աբովյանի պետական մանկավարժական համալսարանի, ագրարային տնտեսագիտական, լեզվաբանական, ճարտարագիտական, ճարտարապետա-շինարարական համալսարանների հետ:

ԱրՊՀ-ն կապեր է ստեղծել Ռուսաստանի Դաշնության Կրթության

ակադեմիայի, Վլադիմիրի պետական համալսարանի հետ:

ԱրՊՀ-ն սերտ կապերի մեջ է Մերձդնեստրյան, Աբխազիայի և Հարավօսեթական հանրապետությունների պետական համալսարանների հետ:

Նկատելիորեն բարելավվել է ուսումնական գործընթացը: Պարբերաբար համալսարան են այցելել և դասախոսություններով հանդես եկել անվանի գիտնականներ, պետական, քաղաքական, հոգևոր գործիչներ Ա.Գ.Ադանբեկյանը, գրող-հրապարակախոս Ջ.Հ.Բալայանը, Կիմ Բակշին, Ա.Նույկինը, Մեծ Բրիտանիայի լորդերի պալատի փոխխոսնակ Քերոլայն Քոքսը, պատմաբաններ Ռ.Հովհաննիսյանը, Վ.Դադրյանը, Ա.Օհանջանյանը, ակադեմիկոսներ մեխանիկ Ս.Ս.Գրիգորյանը, օվկիանոսագետ Ա.Ս.Սարկիսովը, լեզվաբան Գ.Բ.Ջահուկյանը, ֆիզիկոս Ռ.Մ.Մարտիրոսյանը, տնտեսագետ Յու.Մ.Սուվարյանը, շինարար Ս.Գ.Բեզլարյանը, ամենայն հայոց կաթողիկոսներ Գարեգին 1-ը, Գարեգին 2-րդը, Արցախի թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Պարզև Մարտիրոսյանը, ՀՀ և ԼՂՀ նախկին և ներկա պաշտոնյաներ, այդ թվում՝ ՀՀ արտաքին գործերի նախարարներ Վ.Օսկանյանը, Էդ.Նալբանդյանը, ԼՂՀ նախագահներ Ա.Ղուկասյանը, Բ.Մահակյանը, ԼՂՀ պաշտպանության նախարարներ Ս.Ս.Օհանյանը, Մ.Հ.Հակոբյանը, հանրապետության վարչապետ Ա.Հարությունյանը, ԼՂՀ ԱԺ նախագահներ Օ.Ե.Եսայանը, Ա.Վ.Ղույսյանը և ուրիշներ:

2008թ. հուլիսին համալսարանի ռեկտոր է ընտրվում պատմ. գիտ. թեկ., պրոֆեսոր Ս.Վ.Դադրյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր է նշանակվում քիմ. գիտ. թեկնաձու, պրոֆեսոր Ա.Ն.Աբրահամյանը, գիտ. աշխ. գծով պրոռեկտոր՝ պատմ. գիտ. թեկնաձու, դոցենտ Վ.Ռ.Բալայանը և վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր՝ Վ.Մ.Ջավադյանը:

ԱրՊՀ ուսումնական գործընթացն ընթանում է եռաստիճան համակարգով՝ համաձայն Բոլոնիայի հռչակագրի. բակալավրիատ, մագիստրատուրա և ասպիրանտուրա: 2008-09 ուս. տարում համալսարանն անցել է կրեդիտային համակարգով ուսուցման: Ուսումնական գործընթացն ընթանում է առկա և հեռակա բաժիններում:

2009թ. հունվարին ընդունվել է համալսարանի զարգացման ծրագիրը՝ նախատեսված մինչև 2013թ., որի իրագործումը հնարավորություն կտա լուծելու ուսումնական, նյութատեխնիկական, գիտական, սոցիալական բազմապիսի հիմնահարցեր:

2009թ. հունվարից համալսարանի ագրարային ֆակուլտետի հիմքի վրա կազմավորվեց նոր բուհ՝ Հայաստանի ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղը:

ԱրՊՀ գրադարանը ներկայումս ունի ավելի քան 75 հազար գիտական, ուսումնամեթոդական և գեղարվեստական գրականություն, որից շուրջ 32 հազարը՝ հայերեն, 40 հազարը՝ ռուսերեն և 3 հազարը՝ օտար լեզուներով (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և այլն:



Համալսարանում գործում է էլեկտրոնային գրադարան, որը հազեցած է ժամանակակից տեխնիկայով: Նրանում հավաքագրված է շուրջ 18 հազար անուն գրականություն, գործում է ինտերնետային կապը:

Համալսարանի մի շարք դասախոսներ գիտության, կրթության և արվեստի ու սպորտի բնագավառներում մատուցած ծառայությունների համար արժանացել են ԼՂՀ գիտության վաստակավոր գործչի (Ս.Ա.Սարգսյան, Գ.Խ.Բաղդասարյան, Ս.Ա.Խանյան, Ա.Ս.Մխիթարյան, Ս.Կ.Պետրոսյան, Օ.Ե.Բաբայան և Ա.Ս.Աթայան), վաստակավոր նկարչի, (Լ.Բ.Ղալայան), ՀՀ վաստակավոր մարզչի (Ա.Ռ.Առստամյան), ֆիզկուլտուրայի վաստակավոր աշխատողի (Ս.Վ.Բաղդասարյան, Կ.Խ.Բեգլարյան, Ա.Ե.Մարտիրոսյան) բարձր կոչումներին:

Արցախի պետական համալսարանի բարձրագույն պարզևին՝ ոսկե մեդալին են արժանացել Շ.Ս.Աբրահամյանը, Ս.Ա.Սրգսյանը, Հ.Խ.Խաչատրյանը, Հ.Վ.Գրիգորյանը և Ս.Վ.Դադայանը:

Համառոտ ներկայացնելով համալսարանի կազմավորման և կայացման գործընթացը՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

ա) Համալսարանի կազմավորման չորս տասնամյակների ընթացքում ձևավորվել է երիտասարդ սերնդի առաջատար ջոկատ, որը գիտակցաբար ստանձնել է իր ժողովրդին ծառայելու պատրաստակամությունը:

բ) Համալսարանը դարձել է այնպիսի օջախ, որտեղ սոցիալականացվել են ուսանողությունն ու դասախոսական անձնակազմը՝ ազգային ինքնագիտակցության ազդեցության ներքո:

գ) Բուհի թողարկած կադրերով ձևավորվել է ինչպես այժմյան ԼՂՀ ղեկավար մարմինների հիմնական կազմը, այնպես էլ՝ Արցախի մտավորականության գերակշիռ մասը:

40 տարիների ընթացքում ԱրՊՀ-ն աննշան մասնաճյուղից դարձել է խոշոր ուսումնական և գիտական կենտրոն, բարձրորակ կադրերի պատրաստման դարբնոց: Նրա շնորհիվ ամրապնդվել է հանրապետության գիտական ներուժը: Համալսարանի շրջանավարտները բեղմնավոր աշխատանք են տանում ոչ միայն ԼՂՀ-ում, ՀՀ-ում, այլև արտասահմանյան երկրներում:

Այսօր Արցախի պետական համալսարանում գործում են 6 ֆակուլտետներ, 21 ամբիոններ, որտեղ աշխատում են 338 դասախոսներ (110-ը՝ ժամավճարային հիմունքներով): Առկա և հեռակա բաժիններում սովորում են ավելի քան 4700 ուսանողներ, մագիստրանտներ, ասպիրանտներ: Գործում են ուսումնական կենտրոններ, մասնագիտական լաբորատորիաներ, կաբինետներ, երկու մարզադահլիճ: Համալսարանում պայմանագրային կարգով աշխատում են ՀՀ և Ռուսաստանի Դաշնության լավագույն մասնագետներ: ԱրՊՀ-ն համագործակցում է ինչպես Հայաստանի

Հանրապետության, այնպես էլ՝ արտասահմանյան մի շարք գիտակրթական հաստատությունների և կենտրոնների հետ: Համալսարանն ունի հրատարակչություն, որտեղ տարեկան երկու անգամ հրատարակվում են «Գիտական տեղեկագիր» պարբերականը, «Արցախի Համալսարան» ամսաթերթը, գիտական խորհրդի կոմից երաշխավորված գիտական և ուսումնամեթոդական ձեռնարկները: Նմանօրինակ ձեռքբերումներով ԱրՊՀ-ն, մտնելով կայացման նոր փուլի մեջ, նպատակաուղղված է նորանոր հորիզոնների նվաճմանը: